ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 47

ք. Երևան 8-ը հունվարի 2013 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն Նաիրի Մանուկյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կատարողը ստանձնում պայմանագրում նշված ժամկետում պետական աջակցության ծրագրով իրականացնել նախատեսված աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը՝ հիմք ընդունելով սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ապահովման նպատակով «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով հաստատված Հավելված N 1-ի Աղյուսակ N 1-ի 07 բաժնի 02 խմբի 02 դասի «04. Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններ» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ Օրենքը (այսուհետ՝ Օրենք), իր կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն) և սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածի պայմանները:

2.Կողմերի պարտականությունները

2.1. Կատարողը պարտավորվում է.

2.1.1. Իրականացնել՝

ա) մարզիկների, մարզիչների բժշկակենսաբանական, հոգեբանական և այլ ուսումնասիրություններ,

բ) հակադոպինգային հետազոտությունների կատարում,

գ) հակադոպինգային հսկողություն և հավաքական թիմերը համալիր գիտական խմբերով ապահովում,

դ) մանկապատանեկան մարզադպրոցներում (այլ մարզական կազմակերպություններում) մարզվողների (պարապողների) բժշկական հսկողության և մարզիկների վերականգնողական միջոցառումների կազմակերպում:

2.1.2. Հատկացված միջոցներն օգտագործել սույն պայմանագրի 2.1.1. կետով նախատեսված միջոցառումների իրականացման համար:

2.1.3. Ապահովել իրականացվող աշխատանքների հաշվառումը և հաշվապահական հաշվառման սահմանված կարգով վարումը:

2.2. Պատվիրատուն պարտավորվում է՝

2.2.1. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված ծառայությունների մատուցման նպատակով ապահովել համապատասխան ֆինանսական միջոցներով:

2.2.2. Պարբերաբար վերլուծել Կատարողի կողմից իրականացվող աշխատանքները, մշակել առաջարկություններ գործունեության հետագա բարելավման վերաբերյալ, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ:

3.Կողմերի իրավունքները

3.1. Կատարողը իրավունք ունի՝

3.1.1. Պատվիրատուից պահանջել հատկացնելու սահմանված Ծրագրի իրականացման նպատակով նախատեսված ֆինանսական միջոցները, համաձայն հավելվածի:

3.1.2. Պատվիրատուից պահանջել վերացնել բոլոր այն թերությունները և բացթողումները, որոնք խոչընդոտում են Կատարողին լիարժեք իրականացնել իր գործունեությունը պայմանագրի շրջանակներում:

3.1.3. Միակողմանի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառած վնասները, այդ մասին առնվազն 60 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին, եթե Պատվիրատուն խախտել է պայմանագրի պայմանները:

3.1.4. Իրականացնել օրենքներով և իր կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

3.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.2.1. Հետ պահանջել հատկացված ֆինանսական միջոցներից առաջացած ազատ մնացորդը, եթե բացակայում է ՀՀ ֆինանսների նախարարության դրանք այլ նպատակների համար օգտագործելու թույլտվությունը:

3.2.2. Պահանջել Կատարողից հետ վերադարձնել չծախսված գումարի վերջնական (տարեվերջյան) ազատ մնացորդը:

3.2.3. Պարբերաբար հետևել հատկացված դրամական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործմանը և ներկայացվող հաշվետվությունների հավաստիությանը և ճշտությանը:

3.2.4. Ցանկացած ժամանակ լուծել սույն պայմանագիրը՝ Կատարողին հատուցելով դրա արդյունքում վերջինիս պատճառած փաստաթղթերով հիմնավորված վնասը:

3.2.5. Իրականացնել օրենքներով և իր կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

4. Պայմանագրի գինը և վճարման պայմանները

4.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների գինը կազմում է 72715,2 հազար (յոթանասուներկու միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

4.2 Սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարը Պատվիրատուն փոխանցում է Կատարողին՝ համաձայն հավելվածում նախատեսված վճարման ժամանակացույցի:

4.3 Պատվիրատուն վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Պայմանագրի փոփոխումը կամ լուծումը, դադարումը

6.1 Սույն պայմանագրում փոփոխություններն ու լրացումները կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագրով, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է: Սույն պայմանագիրը փոփոխելիս և(կամ) լրացնելիս Կողմերի պարտավորությունները պահպանվում են ըստ փոփոխված և(կամ) լրացված պայմանագրի պայմանների (դրույթների):

6.2 Սույն պայմանագիրը դադարեցվում և(կամ) լուծվում է՝

6.2.1 եթե լրացել է պայմանագրի գործողության ժամկետը,

6.2.2 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ:

8. Վեճերի լուծման կարգը

8.1 Սույն պայմանագրից ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատական կարգով:

9. Այլ դրույթներ

9.1 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում կատարվում է գրավոր:

9.2 Սույն պայմանագիրը կազմված է 2 (երկու) հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.3 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

9.4 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ք. Երևան, Աբովյան 9	«Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն Ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ. Շ. 6 «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Աբովյանի մասնաճյուղ
հ/հ 900011059210 ՀՎՀՀ-02586282	հ/հ 163038103293 ՀՎՀՀ 01504552
Նշխարապազնի դեկավար՝ Ա. Էլոյան	Տնօրեն Ն. Մանուկյան
L.S.	L.S.

Հավելված
08.01.2013թ. կնքված N47 պայմանագրի

«Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2013թ. ՀՀ պետական բյուջեից

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը տարեկան (հազար դրամ)	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից (հազար դրամ), ընդ որում՝											
		1 եռամսյակ			6 ամիս			9 ամիս			տարի		
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
07 բաժնի 02 խմբի 02 դասի «04. Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններ» ծրագիր	72715,2	14543,0	14543,0	14543,0	32721,8	32721,8	32721,8	50900,6	50900,6	50900,6	72715,2	72715,2	72715,2
Ընդամենը	72715,2	14543,0	14543,0	14543,0	32721,8	32721,8	32721,8	50900,6	50900,6	50900,6	72715,2	72715,2	72715,2

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի Հանրապետության սպորտի
և երիտասարդության հարցերի
նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9

h/h 900011059210
ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար՝
_____ Վ. Էլոյան

L.S.

ԿԱՏԱՐՈՂ
«Սպորտային բժշկության և
հակադոպինգային հսկողության
հանրապետական կենտրոն» պետական ոչ
առևտրային կազմակերպություն
Ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ. Շ. 6
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Աբովյանի
մասնաճյուղ
h/h 16303103293
ՀՎՀՀ 01504552
Տնօրեն
_____ Ն. Մանուկյան

L.S.